

Դարայր Դավթյան  
Դավթյան Դարայր  
Դարայր Դավթյան  
Դավթյան Դարայր  
Դարայր Դավթյան  
Դավթյան Դարայր

Paruyr Davtyan: Davtyan Paruyr



## Երախտիքի խոսք

2025թ. հուլիսի 25-ին Գաֆէսճեան արվեստի կենտրոնում բացվեց «Պարույր Դավթյան. Դավթյան Պարույր» խորագրով ցուցադրությունը, որը մոսկվաբնակ հայազգի արվեստագետի առաջին անհատական ցուցահանդեսն էր հայրենիքում:

Մոսկովյան կոնցեպտուալիզմի վառ ներկայացուցիչ Պարույր Դավթյանն ինքնատիպ արտահայտչամիջոցներով ձևավորում է արվեստային հղումներով հագեցած միջավայր, որտեղ կան քննության արժանի բազմաթիվ հարցադրումներ: Անցյալի արվեստի գործերը կազմաբանդելով և դրանց տարրերով նոր աշխատանքներ ստեղծելով՝ արվեստագետը հրավիրում է դիտորդին իմաստասիրական պրպտումների՝ բացահայտելու իր մեկնաբանությամբ տարված զուգահեռներն ու շերտավորումները:

Մանրակրկիտ համադրությամբ այս ցուցադրությունը ներկայացված է հանրությանը որպես արվեստի ինքնատիպ շտեմարան-գլոխկոտրուկ-խաղ:

Հավատարիմ իր առաքելությանը՝ Գաֆէսճեան արվեստի կենտրոնը շարունակում է ժամանակակից արվեստի առաջատար միտումները ներկայացնել Հայաստանում, և հայկական մշակույթի լավագույնը՝ աշխարհին:

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում արվեստագետ Պարույր Դավթյանին:

Ցուցադրության կազմակերպման և իրականացման համար շնորհակալություն են հայտնում Գաֆէսճեան արվեստի կենտրոնի անձնակազմին, որի նվիրումի և ջանքերի շնորհիվ կենտրոնը շարունակում է կյանքի կոչել Գաֆէսճեան ժառանգության տեսլականը Հայաստանում:

**Վահագն Մարաբյան**  
Գործադիր տնօրեն  
Գաֆէսճեան արվեստի կենտրոն













Այստեղ տեսնում ենք խորհրդային հանրակրթական դպրոցներում տարածված կանոնիկ կիսանդրի՝ որպես անցյալի մեծերի նկատմամբ ակնածանքի խորհրդանիշ: Պարույր Դավթյանը խաթարում է այս ձևը՝ Վան Գոգի շուրջ ստեղծելով այլընտրանքային դիցաբանություն. ոչ թե կորստի արվեստագետ, այլ՝ գերադրության, վերածննդի և սյուրռեալիստական բերրիության: Հայտնի կտրված ականջը բազմապատկելով՝ Դավթյանը բացակայությունը վերածում է առատության՝ արձագանքելով հիդրայի առասպելին, որտեղ յուրաքանչյուր կտրված գլուխ կարող է ծնել բազմաթիվ նորերը:

Ինչպես միշտ, նա անցյալի տարրերը վերակազմավորում է ամբողջովին նոր իրականության համատեքստում: Արվեստագետը հրավիրում է այցելուներին շփել ականջները՝ սնահավատության ծիսական գործողություն, որը նաև մարտահրավեր է նետում արվեստին չդիպելու ինստիտուցիոնալ նորմերին, սրբազանի և աբսուրդի, առասպելի և մասնակցության միջև սահմանները մշուշոտելով:

*Հաջողության և պտղաբերության համար պետք է շփել քանդակի ականջները:*

Here we see a canonical bust, once common in Soviet public schools — a symbol of ideological order and reverence. Paruyr Davtyan subverts this form, conjuring an alternate mythology around Van Gogh: not an artist of loss, but of excess, regeneration, and surreal fertility. By multiplying the famously severed ear, Davtyan transforms absence into abundance, echoing the hydra myth where each wound spawns new growth.

As always, he reconfigures fragments of the past into a world entirely his own. Viewers are invited to rub the ears — a ritual act of superstition that also challenges institutional norms about not touching art, blurring boundaries between sacred and absurd, myth and participation.

*One should rub the ears for luck and fruitfulness.*

Վան Գոգի երկակի կիսանդրի (ինտերակտիվ աշխատանք), 2016  
Բրոնզ, մոմանյութ  
Տրամադրված արվեստագետի կողմից

Double Bust of Van Gogh (interactive work), 2016  
Bronze, wax  
Courtesy of the artist





«Խաղաղության պայման», 2022  
Փայտ, խառը տեխնիկա  
Տրամադրված արվեստագետի կողմից

*Condition for Peace*, 2022  
Wood, mixed media  
Courtesy of the artist





САБАНО  
В СССР  
САБАНО  
2



«Կոնֆետային մեքենան» նման է խաղալիքի, որը կյանքի է կոչում արվեստի աշխատանքը և առիթ է տալիս՝ մտորելու արվեստի իմաստների շուրջ: Մեքենայից կարելի է ստանալ կոնֆետներ պարունակող կապսուլաներ՝ արվեստի մասին կարևոր մտածողների ու արվեստագետների աֆորիզմներով: Դիտողներին հրավիրելով ֆիզիկապես գործարկելու մեքենան՝ Դավթյանը շեշտում է մասնակցությունը որպես արվեստի գործի իմաստի կարևորագույն կողմ: Համադրելով սպառման մշակույթը արվեստի մասին գաղափարների հետ՝ աշխատանքը հղում է կատարում այդ թվում ասիական մշակույթում ընդունված կանխատեսումներով թխվածքաբլիթների ավանդույթին, երբ քաղցրավենիքը համադրվում է խոհափիլիսոփայական մտորումների հետ:

Candy Machine combines playful viewer participation with a conceptual reflection on art. The machine dispenses capsules containing candy and aphorisms about art by major artists and thinkers. By inviting the audience to physically activate the device, Davtyan highlights participation as a core component in the creation of meaning. Blending consumer culture with ideas about art, the work also nods to the tradition of fortune cookies in East Asian cultures — where sweets come paired with fragments of wisdom.



«Կոնֆետային մեքենա» (ինտերակտիվ աշխատանք), 2010  
Տրամադրված արվեստագետի կողմից

*Candy Machine* (interactive work), 2010  
Courtesy of the artist

